ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-885-02.03.2021-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 27-ի «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «աշխատանքային օրվա համար չի վճարվում, դրան հաջորդող» բառերը, իսկ «օրվա» բառը փոխարինել «օրերի» բառով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերում եւ 2-րդ մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 7. Օրենքի 22-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասից հանել «մայրության» բառը:
2) 10-րդ մասում «Մայրության նպաստը» բառերը փոխարինել «Նպաստը» բառով, իսկ «անցնելը» բառը՝ «անցնելու ամիսը» բառերով:
3) 12-րդ եւ 13-րդ մասերում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

~~***Հոդված 8.*** Օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.~~

~~«Եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը պակաս է տասներկու ամսից, ապա միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է տվյալ ժամանակահատվածում մյուս բոլոր ամիսների ընթացքում աշխատողին վճարված եկամտի ընդհանուր գումարն այդ ամիսների թվի վրա բաժանելու միջոցով, որը չի կարող պակաս լինել նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսից:»~~

Հոդված 8~~9. Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետից հանել «աշխատանքային օրվան հաջորդող» բառերը:~~՝~~

Հոդված ~~10.~~9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: